Արձանագրություն 4

ՀՀՄՆՀԲՄԱՇՁԲ-19/62 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.11.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Ստեփան Ղազարյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում էր՝ Կարեն Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Հրանտ Հովսեփյան)

1.1 «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները):

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխնությունների մասին
(Հրանտ Հովսեփյան)

2.1 «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Ներկայացված թիվ 3.1 Հավելվածում և կից ներկայացված գույքի վարձակալման թիվ 01 պայմանագրում վերամբարձիչի (ավտոկռունկ) արտադրության տարեթիվը չի համապատասխանում վերջինիս տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրում նշված արտադրության տարեթվին:

2.1.2 Աշխատանքներում օգտագործելու համար ներկայացված վերամբարձիչը (ավտոկռունկ ԿՍ-3575 (ԶԻԼ-133ԳՅԱ)) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես այն չունի առնվազն 25մ բարձացնելու հնարավորություն:

2.1.3 Ներկայացված թիվ 3.2 Հավելվածում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կատարած աշխատանքները չեն համապատասխանում հրավերով կատարած աշխատանքների համար սահմանված պահանջներին:

2.1.4 Հստակ չէ թիվ 3.2 Հավելվածով առաջարկվող՝ վարպետ տանիքագործի, վարպետ սվաղագործի և վարպետ թիթեղագործի աշխատանքային փորձի ժամանակահատվածը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու դրանց համապատասխանությունը հրավերով աշխատանքային փորձի ժամանակահատվածի համար սահմանված պահանջներին:

2.1.5 Ներկայացված <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը հաստատված չեն մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.6 Ներկայացված ՀՀ ԱՆ «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ-ի հետ 15.07.2015թ. կնքված թիվ CR3/A-W/029-15 պայմանագրի գինը սահմանվել է 61899765 ՀՀ դրամ և համապատասխանում է պայմանագրի «Բաժին Բ. Ծավալաթերթ»-ով իրականացվելիք ՀՀ Արարատի մարզի Մխչյանի ԱԱՊԿ-ի կառուցման աշխատանքների ընդհանուր գնին, սակայն չի համապատասխանում 11.01.2016թ. ավարտական ակտով և պայմանագրի կողմ հանդիսացող «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից 05.06.2017թ. տրամադրած տեղեկանքով նշված գնին՝ 60918747 ՀՀ դրամ:

2.1.7 Ներկայացված <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ-ի հետ 15.07.2015թ. կնքված թիվ CR3/A-W/029-15 պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, այն կնքվել է 2015 թվականի հուլիսի 15-ին և աշխատանքների կատարման ավարտը սահմանվել է 2016 թվականի հունվարի 10-ը, իսկ ներկայացված կատարողական ակտից և հաշիվ-ապրանքագրից պարզ է դառնում, որ 2016 թվականին կատարված աշխատանքների ընդհանուր գումարի չափը կազմում է 13824294 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

(Հրանտ Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին հրավերի 1-ին մասի 8.18 կետով սահմանված երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այդ թվում՝ հրավերի 1-ին մասի 8.19 կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ներկայացնել ժամկետանց հարկային պարտավորության վճարումը հիմնավորող փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Հրանտ Հովսեփյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունների մասով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացումից հետո՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հ. Հովսեփյան /նախագահ/

_____ Ս. Ղազարյան

_____ Խ. Մնացականյան

_____ Ա. Ստեփանյան

_____ Ա. Սողոմոնյան /քարտուղար/